ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի ուղերձը Սահմանադրության օրվա առթիվ.

Սիրելի՛ հայրենակիցներ,

Շնորհավորում եմ բոլորիս Սահմանադրության օրվա առթիվ:

Սահմանադրությունը մեր պետականության հիմնասյուներից է, որը միավորում է հասարակությանը ընդհանուր արժեքների շուրջ և սահմանում երկրի զարգացման ու իրավական պետության ամրապնդման ուղենիշները: Մեզանից յուրաքանչյուրի պատասխանատվությունն է հարգել օրենքը, պահպանել սահմանադրական արժեքները և իր ներդրումն ունենալ ավելի ուժեղ ու կայուն Հայաստանի կերտման գործում:

Մաղթում եմ, որ մեր երկրում միշտ գերակայի խաղաղությունը, օրինականությունն ու համերաշխությունը:

Շնորհավո՛ր Սահմանադրության օրը:

Փա՛ռք մեր հերոսներին և կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը: